

ԵԶՆԻԿԻ ԵՐԿԻ ԲՆԱԴՐԱՅԻՆ ՄԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Հ. Մ. ԲԱՐԹԻՅԱՆ

Ա. Ա. Արրահամյանի «Եզնիկի երկի բնագրային մի քանի մեկնաբանություններ» հոդվածում, հրատարակված «Պատմա-բանասիրական հանդեսի» 1920 թ. երկրորդ համարում, տարակուսանք է առաջացնում հեղինակի յոթերորդ մեկնաբանությունը: Թեև Եզնիկի երկի խնդրո առարկա տեղը, որի մասին ստորև խոսք է լինիլու, մինչև պրոֆ. Արրահամյանի հոդվածի լույս տեսնելը մի քանի անգամ թուղզվել է կամ «իմաստավորվել», այնուամենայնիվ նրա միտքը մնացել է մթին: Այն իրականում չի պարզվել նաև «Հանդեսի» երկրորդ համարում լույս տեսած հոդվածում: Իհարկում ենք պրոֆ. Արրահամյանի յոթերորդ մեկնաբանությունն ամրողչությամբ:

«Հեթանոսական պաշտամունքների պատճառին վերաբերող նշված հարցին պատասխանելով՝ Եզնիկը շարունակում է. «յօժարեցոյց (սատանայ) զկէսսն՝ լուսաւորաց երկիր պագաննել, և զայլս՝ օդոյ և հրոյ, երկրի և ջրոյ և հասակաց և փայտից և քարանց, մինչև օձից և գազանաց և ճճեաց անգամ...» (էջ 109): Այստեղ էլ տարբեր կերպ է հասկացվել «հասակաց» բառաձևը:

Զմյուռնիայի հրատարակության մեջ դա «հասկից» ձևով է, որով հրատարակիչները կարծել են, թե խոսքը հասկերի մասին է: Վենետիկյան հրատարակությունը պահպանել է «հասակաց»-ը, որը նույնական է ձեռագրի հետ:

Հ. Մ. Շմիդը «հասակ» բառը հասկացել է «մարդկային կերպարանք» (Menschengestalt): Լ. Մարիեսն իր հրատարակած բնագրում բառը փոխել է՝ դարձնելով «հասարակաց» և թարգմանել է «քոլոլ առարկաները, ամբողջ իրերը» (choses communes): Նա մոտեցել է ճիշտ բացատրությանը: Այստեղ «առարկա» իմաստի համար չենք առարկում, սակայն նշում ենք, որ իզուր է փոփոխված «հասակաց» բառաձևը:

Գ. Խաչատրյանը շատ հեռուն է գնացել թարգմանության մեջ՝ դա բացատրելով «եղանակ» բառով: Նա օգտվել է «Նոր հայկազյան բառարանի» մի բացատրությունից, որն այստեղ չի պատշաճում:

Պետք է ընդունել, որ բնագրում «հասակաց» բառաձևը ճիշտ է գործածված: Այստեղ «հասակ» բառն ունի «կանգուն առարկա» իմաստը: Դրա համար հիմք կարող է ծառայել «Նոր հայկազյան բառարանի» մի նշումը, որը, սակայն, արված է ոչ թե բառահոգվածի բացատրությունների մեջ, այլ՝ վկայություններից հետո, բառահոգվածի վերջում: Այդ իմաստը մատնանշված է «Իրք ծննդոցի» համասպատասխան գործածության հաշվառումով՝ որպես հոմանիշ հուն. ἀναστατήσας և լատ. erectio բառերի: Այս նշանակությունն ամենից հավանական է Եզնիկի այդ գործածության համար, մանավանդ որ «հասակաց»-ը դրված է «փայտից», «քարանց» բառաձևերի մոտ, իսկ օձերի և ճիճուների մասին նշվում է հետո՝ առանձնացումով: Միայն թարգմանելիս պետք է անտեսել նրանից հետո եկող «և»-ը՝ նրա տեղ դնելով բութ նշան՝ «կանգուն առարկաներին՝ փայտերին, քարերին...»: Կարևոր է նկատի ունենալ նաև, որ Եզնիկը «հասակ» բառը իր երկում մի այլ տեղ էլ գործածել է «առարկա» իմաստով՝ Հմմտ. «...ի չգոյէ ի գոյ ածել զհասակս ամենայնի» (էջ 239):

Այսպիսով ցույց է տրված, որ ըստ Եզնիկի հեթանոսները երկրպագել են «մարդկային կերպարանքին», «քոլոր առարկաներին, ամբողջ իրերին», «կանգուն առարկաներին» և այլն: Բայց Եզնիկը այդպիսի բան ասել չէր կարող, քանի որ հեթանոսները ամենևին էլ չէին երկրպագում բոլոր առարկաներին, ամբողջ իրերին: Զարմանալին այն է, որ ուսումնասիրողների մոտ ամենևին հարց չի ծագել, թե Եզնիկը, խառազանելով հեթանոսական պաշտամունքը, հեթանոսների՝ երկնային լուսատուներին, բնության տարրերին, փայտի ու քարը, նույնիսկ անգամ սողուններին, գազաններին և ճիճուներին պաշտելու և երկրպագելու սովորությունը, ինչպես է որ մոռացել է ամենակարևորը՝ կոտորելը: Կարող էր նա մոռանալ կոտորելը, չէ՞ որ հեթանոսները առաջին հերթին դրանց էին երկրպագում, նույնիսկ անգամ լուսատուները, բնության տարրերը, սողուններին, գազաններին և ճիճուներին աբձաճացնելով:

Եզնիկը «Հասակ» բառը ամենայն հավանականությամբ օգտագործել է «արձան» իմաստով և նրան հաջորդող փայտն ու քարը այդ հասակ «արձան» բառից անկախ չեն, խոսքը քարե և փայտի արձանների մասին է, քարե և փայտե կուռքերի. «և հասակաց ի փայտից և քարանց» այո, հենց «ի փայտից» և ոչ «և փայտից», որը պատճառ է դարձել տվյալ տեղի իմաստի աղավաղման: Այդ գրչական սխալը հեշտ է բացատրել: Երբ իրար հետևից թվարկվում են գոյականներ, որոնք կապված են յոթ անգամ կրկնվող «և» շաղկապով, ապա այդ մեկ «ի»-ն էլ հավանաբար մեխանիկորեն «և»-ի է վերածվել:

Այսպիսով՝ ըստ Եզնիկի սատանան հեթանոսներին «հոժարացրել էր» կուռքերին երկրպագել, փայտե և քարե կուռքերին:

¹ Մեր մտքի նշմարտացիությունը հաստատվում է Հին Կտակարանի բազմաթիվ դարձվածքներով: Հմմտ. «Եւ հրձիգ արարին զկուռս նոցա: Քանզի շէին աստուածք, այլ ձեռագործք մարդկան, փայտեղէնք եւ քարեղէնք» (Եսայի, 44, 19): «Եւ պաշտեսցեն անդ զաստուածս օտարս՝ զփայտեղէնս եւ զքարեղէնս» (Երկրորդումն օրինաց, ԻԸ, 36): «Եւ պաշտիցես անդ զաստուածս օտարս, զձեռագործս մարդկան, զփայտեղէնս եւ զքարեղէնս, որք ոչ տեսանիցես եւ ոչ լուիցեն եւ ոչ ուտիցեն եւ ոչ հոտոտիցեն» (Նույն տեղում, Դ, 28): «Եւ զաստուածս զոսկեղէնս եւ զարծաթեղէնս եւ զպղնձիս եւ զերկաթիս եւ զփայտեղէնս եւ զքարեղէնս, որ ոչ տեսանեն եւ ոչ լսեն եւ ոչ իմանան...» (Դանիէլ, Ծ, 23): «Եղիցուք մեք իրրեւ զհերանոսս եւ իրրեւ զազգս երկրի պաշտել զփայտս եւ զքարնս» (Եղեկիէլ, Ի, 32):